ԹԱՌԱԹՈՒՄԲ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Վահանիկ Մարկոսյան

Հեռախոս՝ +374.77.604908

Բնակչություն՝ 477

Թառաթումբ գյուղը գտնվում է Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում, Վարդենիսի լեռնաշղթայի հարավային լանջերին, ծովի մակարդակից 1640մ բարձրության վրա, Եղեգնաձոր քաղաքից 22 կմ հյուսիս-արևմուտք, Երևան քաղաքից 140 կմ հեռավորությամբ: Գյուղը սահմանակից է Հորս, Սալլի, Քարագլուխ, Աղնջաձոր գյուղերին, արևմուտքից սահմանակից է Մարտունու տարածքին: Կլիման տաք է և չոր՝շոգ ամառներով և ցուրտ ձմեռներով, տարեկան տեղումների քանակը կազմում է 400-450մմ: Բնական լանդշտաֆները տափաստանային են: Գյուղը հիմնադրվել է 1830թ. Պարսկահայաստանի Խոյ գավառի Ղորուղ գյուղից գաղթած 10 ընտանիքների կողմից: Ըստ Հայաստանի Հանրապետության ազգային արխիվի տվյալների՝ 1831 թվականին գյուղն ունեցել է 56 բնակիչ՝ 26 տղամարդ և 30 կին, իսկ 1896 թվականին՝ 232 ՝131 տղամարդ և 101 կին:
Գյուղի տարածքում կան շատ խաչքարեր, եկեղեցու ավերակներ, որոնք վկայում են, որ տարածքը բնակեցված է եղել դեռևս հին դարերում:
Գյուղը տվել է Հայրենական Մեծ պատերազմի և Սոցիալիստական աշխատանքի մեկական հերոսներ: Գյուղն ունի գործող եկեղեցի, որը կառուցվել է 1896 թվականին, Հայրենական Մեծ պատերազմում զոհված թառաթումբցիների հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթող: Գյուղն ունի միջնակարգ դպրոց, նորակառուց համայնքի կենտրոն, որտեղ տեղակայված են գրադարանը, մշակութի տունը, համայնքապետարանը, բուժկետը և խաղասենյակ: 2008թ.կառուցվել է խմելու ջրի նոր ջրագիծ, որը վերջնականապես լուծել է խմելու ջրի հիմնախնդիրը: Գյուղում գործում է քարի մշակման արտադրամաս: Բնակչությունն զբաղվում է այգեգործությամբ (հիմնականում՝ խնձոր և ընկույզ), կարտոֆիլի մշակությամբ, մեղվաբուծությամբ և անասնապահությամբ: